/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Բելառուս / Մինսկ / 27.06 - 28.06.2018թ.

- **Նպատակը**

Համաշխարհային Բանկի Տրաստային ֆոնդի «ԱՊՀ տարածաշրջանում աշխատանքի վիճակագրության զարգացումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում «Միգրացիայի և աշխատանքի շուկայի չափումը ԱՊՀ երկրների 2020թ. շրջափուլի մարդահամարների ընթացքում. փորձնական մարդահամարների արդյունքները» խորագրով խորհրդակցություն

- **Քննարկված թեմաները**

Խորհրդակցության շրջանակում հիմնականում քննարկվել են հետևյալ թեմաները.

1. ԱՊՀ տարածաշրջանում 2020թ. շրջափուլի մարդահամարների նախապատրաստական աշխատանքները.

2. Միգրացիայի և աշխատանքի շուկայի չափումը 2020թ. շրջափուլի մարդահամարների ընթացքում.

Վերոնշյալ թեմաների շրջանակում Բելառուսի (Բելստատի) և Ղազախստանի վիճակագրական կոմիտեների մասնագետները ներկայացրեցին Բելառուսում և Ղազախստանում անցկացված փորձնական մարդահամարների հիմնական արդյունքները և քաղված դասերը: Մասնավորապես, մասնագետներն առանձնապես կարևորեցին.

- բնակչության իրազեկման լայնամասշտաբ քարոզարշավ իրականացնելիս, առանձնահատուկ ուշադրություն դարձնել, որ անտեսված չմնա և ո՛չ մի տնային տնտեսություն, բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել հանրությանը լուսաբանելու մարդահամարի նպատակները և դրանց կենսական անհրաժեշտությունը, հավաքագրված տվյալների օգտագործման կարգը և պաշտպանվածությունը՝ բացառելով անհատական տվյալների այլ նպատակներով օգտագործումը.
- ՏԻՄ-երի հետ մարդահամարի հիմնական անձնակազմի համագործակցության առավելագույնս խորացումը.
- մարդահամարի ժամանակավոր անձնակազմի **խստապահանջ** ընտրությունը, ուսուցման լավագույնս կազմակերպումը, ձեռք բերված գիտելիքների ստուգման մեխանիզմների մշակումը՝ ապահովելու հավաքագրված տեղեկատվության որակը:

Դարձյալ Բելառուսում և Ղազախստանում անցկացված փորձնական մարդահամարների արդյունքներով, հանգամանալից ներկայացվեցին միգրացիայի և աշխատանքի շուկայի չափման փորձնական այն ցուցանիշների արդյունքները, որոնց կազմը համաձայնեցված էր ԱՊՀ վիճակագրական ծառայությունների հետ:

ԱՊՀ անդամ երկրներում ժամանակային հնարավորինս փոքր շեղումներով իրականացվելիք ազգային մարդահամարների ծրագրերում միասնական մեթոդաբանության և համաձայնեցված ցուցանիշների կիրառումը հնարավորություն կընձեռի ճշգրտել ոչ միայն ԱՊՀ տարածաշրջանի բնակչության թվաքանակը, այլ նաև՝ անդամ երկրների միջև միգրացիոն հոսքերի ծավալները և ապահովել միասնական աշխատաշուկայի առավել ճշգրիտ գնահատականներ:

3. Մարդահամարը, որպես Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) տեղեկատվական հիմք.

Այս թեմայի ներքո, նախորդ և գալիք՝ 2020թ., մարդահամարների շրջափուլերի օրինակով քննարկվեցին ազգային մարդահամարների ծրագրերի շրջանակում ԿԶՆ-ների մշտադիտարկման որոշ ցուցանիշների ապահովման հնարավորությունները: Ավելին՝ առանձնակի կարևորվեց այն, որ ԿԶՆ այն ցուցանիշները, որոնք հնարավոր է հաշվարկել մարդահամարի տվյալներով, ունեն եզակի առավելություն: Մարդահամարը այն բացառիկ գործիքներից է, որը թույլ է տալիս ցուցանիշները մանրամասնել, օրինակ՝ ըստ բնակչության առանձին սոցիալական խմբերի, ազգային փոքրամասնությունների, միգրանտների կատեգորիաների՝ կարճաժամկետ, երկարաժամկետ, բնակավայրի տեսակի և այլն, ինչն առանցքային սկզբունք է ԿԶՆ առումով:

Խորհրդակցության ընթացքում մասնակից երկրների ներկայացուցիչներն իրենց երկրներում առաջիկա մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի, առկա խնդիրների և դրանց հնարավոր լուծումների, նախատեսված նորարարությունների վերաբերյալ հանդես եկան շնորհանդեսներով: Իրենց ելույթներում մասնակիցներն անդրադարձան նաև ազգային մարդահամարների հարցաշարերում միգրացիայի և աշխատուժի վերաբերյալ ստանդարտացված հարցերի ներառման հետ կապված նախատեսվող պլաններին:

Ելույթով հանդես եկավ նաև Հայաստանի ներկայացուցիչը՝ մասնակիցներին ծանոթացնելով ՀՀ երկու մարզերում 2019թ. հոկտեմբերի 12-19-ին իրականացվելիք փորձնական մարդահամարի նախապատրաստական միջոցառումները, գործողությունների պլանը և ճանապարհային քարտեզը, տեղեկատվության հավաքագրման և մշակման մեթոդի նախատեսվող նորարությունները, առկա և ակնկալվող մարտահրավերները:

Խորհրդակցության ընթացքում առանձնահատուկ ընդգծվեց այն փաստը, որ 2020թ. շրջափուլի մարդահամարներն ԱՊՀ տարածաշրջանում տեղեկատվա-հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման առումով կլինեն շրջադարձային: Այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ տեղեկատվության հավաքագրման մեթոդների մեջ հարցաթերթի թղթային տարբերակը դեռևս չի կորցրել իր արդիականությունը:

Ներկայացված բոլոր թեմաների շուրջ ծավալվեցին ակտիվ քննարկումներ:

4. Մասնակից երկրների միջև համագործակցությանն ուղղված հետագա գործողությունները:

Այս թեմայի ներքո խորհրդակցության մասնակիցները փաստեցին կատարված աշխատանքների և քննարկումների շարունակականության անհրաժեշտությունը: Առանձնակի կարևորեց ԱՊՀ վիճակագրական կոմիտեի գործունեությունը՝ համակարգելու միջազգային ստանդարտների հետ ներդաշնակեցված, միասնական մեթոդաբանության կիրառումն անդամ երկրների վիճակագրական մարմիններում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի առանձնահատուկ կարիքները և հնարավորությունները:

- **Արդյունքները**

Խորհրդակցությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ փորձնական մարդահամար իրականացրած երկու երկրների փորձին: Այն արժեքավոր էր ոչ միայն կիրառված նորարական մոտեցումների հաջողված փորձին, այլ նաև ծագած խնդիրներին և դրանց հաղթահարմանն ուղղված միջոցառումներին ծանոթանալու առումով՝ ՀՀ 2019թ. փորձնական մարդահամարի իրականացման ընթացքում կիրառելու հաջողված փորձը և հնարավորինս խույս տալու համանման խնդիրներից: Խորհրդակցության օրակարգի շրջանակում հաստատվեց միգրացիայի և աշխատանքի շուկայի ցուցանիշների ցանկը՝ դրանք 2020թ. շրջափուլի մարդահամարների ազգային ծրագրերում ներառելու համար: Խորհրդակցության ձեռքբերումներից էր նաև այն, որ մասնակից այն երկրներին, որոնք մարդահամար իրականացնելիս նախատեսել են օգտագործել վարչական ռեգիստրի գործիքը, խորհուրդ տրվեց առանձնակի «զգուշավորությամբ» և փորձագիտական ուսումնասիրությունից հետո միայն օգտագործել դրանք:

- **Նշումներ**

Խորհրդակցությանը մասնակցում էին ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական մարմինների մասնագետները, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչները:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել է Ռուսաստանի Դաշնության կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան